Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն 3

Ն ԿՄՋԳ-ԳՀԱՇՁԲ-18/12 ծածկագրով գնանշման հարցմամբ գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Ջրվեժ «26» «ապրիլի» 2018թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Գ.Բաղալյան, Ս.Թադևոսյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

Ն ԿՄՋԳ-ԳՀԱՇՁԲ-18/12 ծածկագրով գնանշման հարցման գնահատման արդյունքների հաստատման մասին

Տեղեկատվություններ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման և որակավորման փաստաթղթերի վերաբերյալ

1.ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 44-րդ կետի համաձայն մասնակցի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող, քանի որ սահմանված ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից տեղեկատվություն չի ստացվել:

2. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հաստատել որ ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-18/12 ծածկագրով գնանշման հարցման մասնակից՝ «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի ներկայացրած հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում որակավորման պահանջներին «Մասնագիտական փորձառություն», «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշներով:

3.ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 47-րդ կետի համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին առաջարկելով մինչև 2018 թվականի ապրիլի 27-ի ժամը 18:00-ն ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ:

Մասնավորապես.

«Մասնագիտական փորձառություն» - ներկայացված փաստաթղթերում բացակայում են՝ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

«Աշխատանքային ռեսուրսներ» - հրավերով աշխատանքային ռեսուրսներ որակավորման չափանիշի մասով պահանջվում է՝ ճարտարագետ-շինարար և տեխնիկ-էլեկտրիկ, մասնակցի կողմից տեղեկանքով ներկայացվում է ճարտարագետ-էներգետիկ, որի փաստաթղթերը չեն ներկայացվել:

Բացակայում են մասնագետների՝ ճարտարագետ-շինարարի և տեխնիկ-էլեկտրիկի որակավորումը հավաստող փաստաթղթերը՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Ներկայացված՝ հավելված 5.2-ը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

<<Տեխնիկական միջոցներ>> - հրավերով նախատեսված եռակցման ագրեգատի առկայության մասին հավաստող փաստաթղթեր չկան և էքսկավատորի վարձակալության պայմանագիրը ամբողջական չէ, ներկայացնել ամբողջությամբ:

Որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված տեղեկությունները (փաստաթղթերի) «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, մասնակցի կողմից պետք է տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատվեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկվեր հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

4.Նիստը ընդհատվում է մինչև 2018 թվականի մայիսի 3-ի ժամը 10:00-ն՝ շտկված փաստաթղթերի հիման վրա հայտի գնահատման նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան

Անդամներ՝ Ս.Թադևոսյան

Գ.Բաղալյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան